ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

14 ապրիլի 2015թ. թիվ 222-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի N 667-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 2-ի N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 2-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի օգոստոսի 2-ի «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 667-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումը.

1. Հրամանի 1-ին կետը լրացնել նոր՝ 5.2-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

<<5.2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման հավելվածով հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի <<բ>>, <<գ>> և <<դ>> պարբերությունների հիման վրա՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով.

ա. ապրանքների գնման հրավերի տեքստի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 5.2.1-ի,

բ. աշխատանքների գնման հրավերի տեքստի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 5.2.2-ի,

գ. ծառայությունների գնման հրավերի տեքստի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 5.2.3-ի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ժամանակավոր պաշտոնակատար Ա. Աֆրիկյան

ՖՆ 001755